# Ա ՐՁ Ա Ն Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

Երևանի պետական համալսարանի
Կենսաբանության ֆակուլտետի գիտական խորհրդի
2021 թ. հոկտեմբերի 26-ին կայացած թիվ 3 նիստի

Գիտական խորհրդի 40 անդամներից նիստին մասնակցել են 32-ը:

Օրակարգում՝

1. Կենսաբանության ֆակուլտետի ասպիրանտների և հայցորդների տարեկան ատեստավորման հարցը:
2. Կենսաբանության ֆակուլտետի կենսաֆիզիկայի ամբիոնի հայցորդ Զվարթ Մովսիսյանի թեկնածուական ատենախոսության թեմայի հաստատման և գիտական ղեկավարի նշանակման հարցը:
3. Կենսաֆիզիկայի ամբիոնի հեռակա ուսուցման ասպիրանտ Աննա Վարդանյանի գիտական ղեկավարի վերանշանակման ու ատեստավորման հարցը:
4. Ընթացիկ հարցեր:

1. ԼՍԵՑԻՆ՝ կենսաբանության ֆակուլտետի ասպիրանտների տարեկան ատեստավորման հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝ կենսաբանության ֆակուլտետի դեկան, ՀՀ ԳԱԱ թղթ. անդամ, պրոֆեսոր Է.Ս. Գևորգյանը, գենետիկայի և բջջաբանության ամբիոնի վարիչ, ՀՀ ԳԱԱ թղթ. անդամ, կ.գ.դ., պրոֆեսոր Ռ.Մ. Հարությունյանը, կենսաքիմիայի, մանրէաբանության և կենսատեխնոլոգիայի ամբիոնի վարիչ, կ.գ.թ. Ա.Ա. Փոլադյանը, կենսաֆիզիկայի ամբիոնի վարիչ, կ.գ.դ., պրոֆեսոր Պ.Հ. Վարդևանյանը, բուսաբանության և սնկաբանության ամբիոնի վարիչ՝ կ.գ.դ., պրոֆեսոր Ս.Գ. Նանագյուլյանը, մարդու և կենդանիների ֆիզիոլոգիայի ամբիոնի վարիչ, կ.գ.թ., դոցենտ Ա. Ֆ. Կարապետյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ՝ հաշվի առնելով, որ նշված ժամանակահատվածում ասպիրանտների կողմից կատարվել են պլանով նախատեսված աշխատանքները և ամբիոնների կարծիքները՝ ատեստավորել հեռակա ուսուցմամբ ասպիրանտներին.

- ԵՊՀ կենսաբանության ֆակուլտետի բուսաբանության և սնկաբանության ամբիոնի չորրորդ տարվա հեռակա ուսուցմամբ ասպիրանտ Էմմա Սերգեյի Բոյաջյանին (գիտական ղեկավար՝ բուսաբանության և սնկաբանության ամբիոնի վարիչ, կ.գ.դ., պրոֆեսոր Ս.Գ. Նանագյուլյան):
- ԵՊՀ կենսաբանության ֆակուլտետի բուսաբանության և սնկաբանության ամբիոնի երրորդ տարվա հեռակա ուսուցմամբ ասպիրանտ Տիգրան Ալեքսանդրի Եսայանին (գիտական ղեկավար՝ բուսաբանության և սնկաբանության ամբիոնի վարիչ, կ.գ.դ., պրոֆեսոր Ս.Գ. Նանագյուլյան):
- ԵՊՀ կենսաբանության ֆակուլտետի կենդանաբանության ամբիոնի հեռակա ուսուցմամբ ասպիրանտ Լևոն Արթուրի Հարությունյանին (գիտական ղեկավար՝ կ.գ.թ., դոցենտ Ա.Ս. Ղազարյան):
- ԵՊՀ կենսաբանության ֆակուլտետի կենդանաբանության ամբիոնի երկրորդ տարվա հեռակա ուսուցմամբ ասպիրանտ Արմինե Մանվելի Քոսյանին (գիտական ղեկավար՝ կ.գ.դ., պրոֆեսոր Մ.Ս. Առաքելյան):
- ԵՊՀ կենսաբանության ֆակուլտետի կենսաքիմիայի, մանրէաբանության և կենսատեխնոլոգիայի ամբիոնի՝ առաջին տարվա հեռակա ուսուցմամբ ասպիրանտ Գայանե Մխիթարի Հայրապետյանին (գիտական ղեկավար՝ կ.գ.դ., պրոֆ. Կ.Ա. Թռչունյան):
- ԵՊՀ կենսաբանության ֆակուլտետի կենսաքիմիայի, մանրէաբանության և կենսատեխնոլոգիայի ամբիոնի երկրորդ տարվա հեռակա ուսուցմամբ ասպիրանտ Լուսինե Արսենի Կարապետյանին (գիտական ղեկավար՝ կ.գ.դ. պրոֆ. Կ.Ա. Թռչունյան):
- ԵՊՀ Կենսաբանության ֆակուլտետի կենսաքիմիայի, մանրէաբանության և կենսատեխնոլոգիայի ամբիոնի՝ չորրորդ տարվա հեռակա ուսուցմամբ ասպիրանտ Անահիտ Վարդանի Սամվելյանին (գիտական ղեկավար՝ կ.գ.դ., պրոֆ. Կ.Ա. Թռչունյան):
- ԵՊՀ Կենսաբանության ֆակուլտետի կենսաքիմիայի, մանրէաբանության և կենսատեխնոլոգիայի ամբիոնի՝ երրորդ տարվա հեռակա ուսուցմամբ ասպիրանտ Ռազմիկ Ռուբենի Սարգսյանին (գիտական ղեկավար՝ կ.գ.թ., դոցենտ Հ.Հ. Փանոսյան):
- ԵՊՀ կենսաբանության ֆակուլտետի գենետիկայի և բջջաբանության ամբիոնի երկրորդ տարվա հեռակա ուսուցմամբ ասպիրանտ Ալիսա Թադևոսի Մանուկյանին (գիտական ղեկավար՝ կ.գ.դ., պրոֆ. Ռ.Մ. Հարությունյան):
- ԵՊՀ կենսաբանության ֆակուլտետի Տ. Մուշեղյանի անվան մարդու և կենդանիների ֆիզիոլոգիայի ամբիոնի երկրորդ տարվա հեռակա ուսուցմամբ ասպիրանտ Մարգարիտա Սարգսյանին (գիտական ղեկավար՝ բ.գ.դ., պրոֆեսոր Մ.Գ. Աղաջանյան):
- ԵՊՀ կենսաբանության ֆակուլտետի կենսաֆիզիկայի ամբիոնի հեռակա ուսուցմամբ ասպիրանտ Աննա Վարդանյանին (գիտական ղեկավար՝ կ.գ.դ., պրոֆ. Պ.Հ. Վարդևանյան):

2. ԼՍԵՑԻՆ՝ կենսաբանության ֆակուլտետի կենսաֆիզիկայի ամբիոնի հայցորդ Զվարթ Մովսիսյանի թեկնածուական ատենախոսության թեմայի հաստատման և գիտական ղեկավարի նշանակման հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝ կենսաբանության ֆակուլտետի դեկան՝ ՀՀ ԳԱԱ թղթ. անդամ, պրոֆ. Է.Ս. Գևորգյանը, կենսաֆիզիկայի ամբիոնի վարիչ, կ.գ.դ., պրոֆ. Պ.Հ. Վարդևանյանը, ով նշեց առաջարկվող թեմայի արդիականությունը:

ՈՐՈՇԵՑԻՆ՝ հաստատել Զ. Մովսիսյանի թեկնածուական ատենախոսության թեման՝ "Սինթետիկ պոլիռիբոնուկլեոտիդների հետ տարբեր լիգանդների կոմպլեքսագոյացման ուսումնասիրությունը" Գ.00.02 "Կենսաֆիզիկա, կենսաինֆորմատիկա" մասնագիտությամբ: Գիտական ղեկավար նշանակել կ.գ.դ., դոցենտ Ա.Պ. Անտոնյանին:

3. ԼՍԵՑԻՆ՝ կենսաֆիզիկայի ամբիոնի հեռակա ուսուցմամբ ասպիրանտ Աննա Վարդանյանի թեկնածուական ատենախոսության գիտական ղեկավարի փոփոխման հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝ կենսաբանության ֆակուլտետի դեկան՝ ՀՀ ԳԱԱ թղթ. անդամ, պրոֆ. Է.Ս. Գևորգյանը, կենսաֆիզիկայի ամբիոնի վարիչ, կ.գ.դ., պրոֆ. Պ.Հ. Վարդևանյանը, ով ներկայացրեց Աննա Վարդանյանի թեկնածուական ատենախոսության գիտական ղեկավարի վերանշանակման նպատակահարմարությունը:

ՈՐՈՇԵՑԻՆ՝ կենսաֆիզիկայի ամբիոնի հեռակա ուսուցմամբ ասպիրանտ Աննա Վարդանյանի թեկնածուական ատենախոսության գիտական ղեկավար վերանշանակել կ.գ.դ., դոցենտ Ա.Պ. Անտոնյանին:

4. Քննարկվեցին մի շարք ընթացիկ հարցեր նվիրված մանկավարժական և գիտական աշխատանքների արդյունավետ կազմակերպմանը:

Գիտական խորհրդի նախագահ՝
ՀՀ ԳԱԱ թղթ. անդամ, պրոֆ. Է.Ս. Գևորգյան

Գիտական խորհրդի քարտուղար՝
դոցենտ՝ Ի.Վ. Շահազիզյան